

«նչ բեկեալ» (էջ 4)։ Լուսադոյն պիտի լինէր ըսել։ «Կոր կ'ըսուի այն գիծը՝ որ ոչ ուղիղ է և ոչ բեկեալ»։

Յետոյ կան ձեւեր ալ որոց սահմանք կը պակսին, ինչպէս Շրջանակին, որուն կազմութեան կերպը միայն կը բացատրուի (էջ 28), և կրնայ սահմանուիլ։ «Երկու ծայրերը իրարու միացած կոր գիծ մը, որուն բուն կէտերը հասարակական հետու են ներքին կետէ մը՝ որ կեդրոն կ'ըսուի»։ Եւ փոխանակ շրջանակի՝ աւելի ճիշդ պիտի լինէր ըսել շրջապատ, շփոթութիւն չմագեղու համար տղայոց մարքին մէջ։

Փութանք ըսելու, թէ այս մի քանի անշան գիտողութիւնք երբեք պատգարիքի մը յարգը չեն կարող նուազեցնել. մանաւանդ որ իրեն համառոտութեան մէջ, հեղինակն ամէն ջանք ըրած է կարեւոր բաները զանց չընել, և ըստ կարելոյն զործնական կերպով բարձնել ընել տղայոց հարկաւոր գիտելիքները։ Լեզուին և ոճոյն յստակութեան հետ կը միաբանին նաեւ տպագրութեան և ձեւերուն մարդութիւնն, որուն ամենայն խնամք տալուք է։ Հետեւաբար շատ օգտակար կրնայ լինել սա՝ ազգային նախակրթական վարժարանաց համար։

Ա. Յ.

ԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԹԵՐԹԵՐ

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ. — Նոր թերթ մի եւս լոյս կը տեսնէ արտասահմանի մէջ. ասոր ուղղութիւնը բոլորովին տարբեր է քան մինչեւ ցարդ ամէն լոյս տեսած հանդէսներն կամ օրաթերթներն, սա կու գայ առաջնորդ լինելու հայ հասարակութեան հոգւոյն ու բարոյականին. լաւ և զովելի պաշտօն մ'է այդ. յաջողութիւն կը մաղթենք նորա բարձրաստիճան խմբագրին Զուլպայեցի՝ Տ. Թորոս Տ. Իսահակեանին, որ է հոգեւոր հովիւ Մանչեսթրի ազգայնոց։ Այս անուամբ միեւնոյն Յարգ. խմբագրին 1888ին է Պոլիս

կը հրատարակէր իւր թերթը՝ ամէն շաբաթ. և բաական տարի անգործ մնալէն յետոյ, դարձեալ ազգին Ս. Հայրիկը՝ հոգի ու խրախոյս կու տայ, ներկայիս նոյնը հրատարակելու. և կը հրատարակուի։ Ուշափ ալ կարեւոր է թերթն, բայց և այնքան դժուարին անոր խմբագրութեան յաջողութիւնը, Գիտարին է եթէ յարգ. խմբագրութիւնը ըստ ժամանակին գիտութեան պահանջին, ճշմարտ գիտական նոր և զօրեղ փաստերով պայքար մղելու ընդդէմ եկեղեցական մարտիկներու. և ջրելու այն ամէն նոր վարդապետութիւններն, որով արդի դիտունք՝ ոգի ի բոհն՝ ջանք կը զննն խախտել կրօնքի և արարչութեան հիմն։ Եւ այդ գիտութիւնն է որ տակաւ առ տակաւ յԵրուսաղէմ կը ծիլ, կը ճշմարտորդ և յառաջադիմութեան գիմակով՝ հոգեկործան միկրոպիներ կը վարակէ միամիտ էակներու մէջ։

Բայց անոնց դէմ պայքար մղելու համար, մեր կղերն պիտի ունենայ իր մէջ քաջ գիտական անդամներ, օժտեալ դարուս վարդապետութեանց թեր ու դէմ, հին և նոր տեղեկութեամբք։ Կողմացին Եզնիկ ոչ միայն անտարանական փաստագիր, այլ և ուսումնական հզօր վարդապետութեամբ՝ ջախջախեալ Պարսից և Մանիքեցոց աղանդոյն։ Հայ եկեղեցոյ Ս. Հայրերն՝ ոչ միայն հոգեբոյն քնարով նոյն կարգացին Նետտորի և Արիսի պիղծ աղանդոյն, ոչ միայն անիծեցին՝ կրկին ընձիւղեալ անիծից արմատն՝ հայհոյիչ Մակեդոնը, այլ և պերճախօս լեզուով և հմտալից գրչով՝ մաքառեցան ընդդէմ՝ այն ապականիչ գայլերուն աղանդաւոր վարդապետութեանց։

Կրօնաթերթին խմբ. հետեւեալն կը գրէ.

«Մենք այսօր հիացմամբ եւեթ կը յիշենք մեր երանաշնորհ եկեղեցական նախնեաց գործերն. բայց կը մոռանանք որ մենք եւս նոցա պէս մարդիկ եմք, մենք եւս նոյն առաքելական ձեռնադրութեամբ կաշուած եմք ի պաշտօն Աստուծոյ, մենք եւս նոյնքան անիծեմք Ս. Հոգւոյն չնորհքն և զօրութիւն օրքան նոքա, և մենք դեռ Լուսաւորեալ և յառաջադէմ դալու առաւելութիւնները կը վայելեմք զոր նախա լուսնէն»։

Առաջին պարկին մէջ Ս. Խրիմեան Հայրիկ կաթողիկոսն՝ համառօտ գրութեամբ, խմբագրին քաջալերական օրհնութիւն կու

տայ, այս է պրակին առաջին յօդուածը, որուն կը յաջորդէ խմբագրին յառաջաբանը, որ կը պարզէ նոյն թերթին կարեւորութիւնը, և անով հրաւեր կը կարգայ ամէն կրօնական պաշտօնէից՝ որ զրչով աջակցին այդ կարեւոր ձեռնարկին: Անդրանիկ թերթին մէջ՝ իբրեւ բանասիրական յօդուած՝ կարելի է ընդունիլ «Առանձնաբան Հայաստանեայց եկեղեցոյ» վերնագրով յօդուածն, որ է ծառայած պատմութիւնն մեր նախկին կրօնից և Արքայոց դարձին: Կը բովանդակէ Լազարեան ճեմարանի գրչագիր աւետարանի վրայ հետաքրքրական տեղեկութիւնք: Հրատարակած է Գեոր. Տ. Մամբրէ Եպ. Մարկոսեանի մի բարոյ՝ Փրկչին Ս. Երանդեան վրայ, բնաբան առնելով «Անառապի Տէր Աստուած մեր ինքեան եկեղեցի և փրկեացէ զմեզ»: Ասորն են առաջին պրակի յօդուածներն, որոնք խնամքով պատրաստուած են և գրուած հայ ժողովրդեան հոգին մշակելու:

ՆՈՐ ԿԵԱՆՔ. — Ա. Արփիարի թերթին կը գրէ.

«... Վենետիկ Թափայէլեան վարժարանը կ'աշակերտմ. կիրակի իրիկուն մը դասուիին պտղատէ վերադարձած մտեր ենք տնօրէն հօր սենեակը, ուր գրադարանին առջեւ ղրգուած են Գերմանացիք մը եկեղեցական պատմութեան նորատիպ հատորները. ու տնօրէնը Հ. Ալիշան, զարմարեալ կ'ըսէ մեզի՝ Աս ի՜նչ պնդազգագայներ են. լին սորվիր թէ Հայոց եկեղեցին Եւստիքական լէ. այս գրադարանութիւնը միշտ կը հերքուի»:

Ուրշափ հիւն միջազէպ մ'է գոր կը յիշատակէ Պ. Արփիար, և մենք անոր արձագանգ կ'ըլլանք. և ընթերցողն որ եթէ անտեղեկ է Ալմանաք Հաշէթի մի գրապարտութեան, և աստի առթեալ Պօլսոյ թերթերու միջեւ յարուցեալ վայնասունին, կրնայ իրաւունք ունենալ բողոքելու, թէ ինչո՞ւ այդ բազմադարեան պօգալի խնդիրն, նորէն կը յուզուի, թէ ինչո՞ւ այդ զիականացեալ գրադարանութիւնը՝ նորէն կեանք կ'առնու: Բայց պէտք է որ նա իւր վերջնական լուծումն ունենայ, քանի որ նա՝ որ թաղուած է ոչնչացած կը կարծուի, գեռ ողջ է և լրագրաց զարկութիւն առաքիպ:

Շրջուն յօդուածագիր մը Հորոյ անուա-

նեալ Պօլսոյ թերթի մը մէջ՝ բողոք կը կարգար Ալմանաք Հաշէթին դէմ, որ իւր վերջին հրատարակութեան մէջ, զՀայոց Եւստիքական կ'անուանէր: Եւ յօդուածագիրը իրաւունք ունէր զայրանալու այդ գրապարտութեան գէմ. բայց մի կողմէն երբ իրեն խորշի կ'երեւէր գրապարտութիւնը, ինքը չէր զգուշանար այդ ոչ այնքան պատուաւոր թերթութեան մէջ սայթաքելու, ենթադրելով, թէ մի գուցէ մենք Միխիթարեանքս(?) Ալմանաք Հաշէթի տուած ըլլանք (!) այդ գրապարտութեան:

Մենք չուզեցինք այդ ցաւալի գրապարտութեան պատասխանել. և եթէ հակառակ մեր թերթի ուղղութեան շարժելնք, մեր պատասխանն պիտի ըլլար, 'խղիղը Հորոյն՝ որ բարեհաճէր տեղեկանալ Ալմանաք Հաշէթի տնօրէնին թէ այդ գրապարտութեան տեղեկութիւնն վնասեալ միխիթարեանին են տուողք: Ինչպէս նոյն տտեն, նոյնպէս արդ՝ մենք Հորոյի հետ պիտի չի զբաղենք, միայն այսչափ իրեն կրնանք ըսել, որ վնասեալ միխիթարեաններու չափ, զեռ ոչ ոք գրչով ու խօսքով պատեղազմած է նախկին Հայ սրբազան հարց Վարդապետութեանց վրայ քուած մտերքը ջնջելու. և մեր ըսածին թող վկայ լինի՝ նոյն իսկ վերջերս մեր ապարանին հարատարակուած շարականն, որուն բազմադիմ մեծ արժանիքն, ափսոս որ միայն կղերական դասուն ծանօթ է: Անցնինք. — Այս խնդրոյ ժամանակ՝ Պօլսոյ լրագրիներն ուղեցին ճարմը մտածել՝ մի անգամ ընդ միշտ՝ Եւստիպացուց ուղեղն դուրս խլել այդ գրապարտութիւնը. բայց գործը անճարակ մնաց, և պարձեալ Եւստիպացուն նոյն սխալման մէջ պիտի յամարէ, իթէ մենք չսրբագրենք զինքը. և մեր համեստ կարծեօք, քանի որ ներկայիս հայ լրագրութեան մէջ ծնաւ կրօնական ազգային նոր թերթ մը, անոր պատշաճ է՝ յայտնի պարզել և ցուցնել՝ Հայ եկեղեցոյ նախնի սրբազան հարց ընդունած և դաւաճած վարդապետութիւնն և յետոյ Պ. Միքայէլ Զեքազ զանոնք Եւստիպացուց ներկայացնելու է, երբ քիչ ատենէն ի Փարիզ կ'ազմեալ կրօնական և պատմական միջազգայն ժողովոյն պիտի մասնակցի: Եւ Պ. Զեքազի պէս անձ.

նաւորութիւն մը, շատ ձեռնհաս է այս գործն յաջողպալն կատարելու :

PARIS NOUVELLES. — Այս գրչատիպ գիւտագիտական թերթին կ'իմանանք որ Բարիդի ցուցահանդիսի

« Բացման և փակման վեց տիւններուն մէջ Բարիդի մէջ բաւական թուով գիտական փառքներ տեղի պիտի ունենան : Այդ համաժողովներուն մէջ քանի՜ն մասնակցելու համար հրաւիրուած են նաեւ մի քանի Հայեր որոնց ոմանց անունները արդէն հրատարակուեցան ազգային թերթերու մէջ, ոմանց անունն ալ ՀՀ արտարարկուեցաւ : Այդ ՀՀ արտարարկուածներէն մին է Բաւարիայի խմբագիր Պր. Ա. Բաւարացեանի անունը, որ հրաւեր ստացեր է մասնակցելու համաժողովին պատմութեան միջազգային գոյնըէն » :

Ուրախ ենք բռնու, որ մեր Բարիդու գիտուններէն Պ. Պ. Ջերազ և Բաւարացեան այդ պատուաւոր համաժողովին ոչ թէ հրաւեր կը մուրան, այլ կը ստանան :

ԵԱԽԻՂ. — Վառնայի Շարժում ժողովրդական լրագիրն՝ մի քանի օր առաջ աւետած էր Շաշիդ անուամբ կիսամենայ հանդիս մը երեւումը. որ ներկայիս գոյութիւն առած է և մեր առջեւ ունինք առաջին պրակն : Թերթն Տօթթ. Յ. Ս. Փափագեանի խմբագրութեամբ լոյս կը տեսնէ ի Վառնա : Ասոր նպատակն ըստ Պ. խմբագրի յայտարարութեան, է արտասահմանի Հայութեան մէջ ծաւալել գրականութիւնը, ժողովուրդը մղել համերաշխ գործելու, եր գրէ :

« Երբեք չպիտի յարձակիք մի է անհատականութեան, մի է մարմնի կամ մի է հաստատութեան դէմ : Ենթադրութիւնները լոկ թելագրութիւններ պիտի ըլլան, համաճիւղ է անկողնականը, զսուրկ վերաւորել հանգամանքէն » :

Շատ լաւ ու լուրջ ուղղութիւն մ'է այս, և առանց ասոր նոր թերթ մը կարելի չէ ժողովրդեան համակրանքը գրաւելու : Շաշիդ աշխատակիցը առաջին թերթին մէջ ընտիր յօդուածներ գետեղած են, Երուսաղ Սրմաքէլիանցեան կը գրէ :

« Երբեք վիթխարի սխալներ, որոնց վրայ կը կռիւն ազգի մը գոյութեան խաթմանը, հիմնաւոր և արտասահմանի հայութեան մէջ, մասունք, զարգացն ու եկեղեցին : Թող մասնայ մեզ պատրիարքարանը, թող էլ միաբաններ տաք նայուածքներ չենաք մեզ, մենք արտասահման

ենան Հայերս՝ առանց ուստահայու և Բրքա-հայու խտրութեան՝ հեռաւորութիւնները կը տրեւով մտքի ու սրտի խանդու ու գուրգու-րալից կապերով. ոչ, անաշարտ և հզօր կը պահենք մեր ազգային գոյութիւնը, երբեք չազդուելով ոչ միջավայրէն, ոչ ալ օտարին տարւորուեցող ազդեցութենէն » :

Վառնայի Հայ գրագէտներէն է այս գրիչը. շատ միթիւրական են իւր իօսքերը : Մեր արտասահմանի աղօթութիւնը մանաւանդ պուլկարահայր, մեծ ջանք ու խանդ ունին Հայրենի կրօնքն և ազգութիւնն անջինջ պահելու և կրնանք ըսել որ ոչ մի ազգային գաղութ՝ առոնց նման գոյիւն և ընդօրինալ կելի կազմութիւն ունի : Պուլկարահայր կը վաւերացնեն վերոյիշեալ յօդուածագիր խօսքերն իրենց գործերով. անոնք ներկայիս ունին չորս թերթ Խրաւանք, Հայելի, Շարժում և Շաշիդ, ունին Հայկական յատուկ վարժարաններ, և մերթ ընդ մերթ կու տան թատերական ներկայացումներ, և այլն. ու այս ամէն՝ յայտ յայտի կը ցուցնեն, թէ մեր Պուլկարահայր հաստատարմ կը մնան անջինջ պահելու իրենց ազգային գոյութիւնն : Այս առաջին պրակն մէջ կը գտնենք բնաշխարհի մի քանի սրտամալիկ միջնադարաց նկարագիրն. մուրացկանի մը պատմութիւն. Օտեանի շիրմին վրայ համառօտ տեղեկութիւն մը խորհրդածութեամբ : Եւ իբրեւ գիտական յօդուած, կը գտնենք Լոնտոնայի մէջ կազմուած պտղակերութեան համաժողովին վերջին դուամբման որոշողութիւնը : Վառնայի մէջ այս թերթի երեւումը՝ մենք տեղացի Հայ գաղութին համար շատ օգտակար կը գտնենք, և կը մաղթենք անոր խմբագրին և աշխատակցաց յաջողութիւն և յարատեւութիւն :

ԹՐԲԱՆԱՅ ԹԵՐԹԵՐ

ԲԻԽԱՆԳԻՆԻ. — Պ. Բիւզանդ քէլչեանի թերթն կ'ունենայ ուրիշ նոր աշխատակից մ'ալ՝ զՊ. Խաչկոնց : Անցեալներն՝ Տէ. միւրնպաշեանն էր՝ որ Պոլսոյ լրագիրները իւր յօդուածներով կ'ողուէր, արդ նոյն պաշտօնը կը ստանան Պ. Խաչկոնց. սա մի տարի առաջ՝ Բիւրակնի մէջ քանադարական մշա-

կուած յօդուածներ կը հրատարակէր և Բիւրակն ընթերցողը՝ ղեռակոնց կը ճաննան Բանասէր գրիչ մը։ Եւ Բիւրակն մէջ գրական գոհացուցիչ արդիւնք մը թողած է, և կրնանք ըսել որ նոյն ազգագրական շաբաթաթերթին ամենէն եռանդուն և ոգի տուող գործիչն ինքն եղած է։ Բիւրակնի աշխատակցութիւնն դադրելէն յետոյ, սկսած մի քանի անգամ Հանրագիտակի և Երաղիկ մէջ ոչ սակաւ ընտիր յօդուածներ զետեղելու, բայց անոնց մէջ աւելի դրաղէտ մ'եղեցաւ, քան թէ բանասէր մը։ Ներկայիս Բիւրակնի ղեկավարութիւնն և մեր սրբազան երգերու մասին՝ անընդհատ գեղեցիկ ուսումնասիրութիւն մը կը հրատարակէ, որ եթէ հմուտ բանասիրաց համար նորութիւն մը չհամարուի, սակայն այդ գիտութիւնը մեր հասարակութեան մեծ մասին տակաւին բոլորովին մուծ ըլլալով, նոյն յօդուածոց ընթերցումն՝ անոնց օգտակար է։ Ազգային եկեղեցական երգերու վրայ, տարիներ առաջ մեր ծերունի մատենագէտ Վ. Հ. Գ. Չարեհանայեան վարդապետն՝ գնահատելի հմտութեամբ՝ խօսած է իւր «Հայերէն դպրոցեան» պատմութեան մէջ. աստի և այլ բաղամիտ աղբիւրներէ Պ. Խաչկոնց մեղադրան և գովելի աշխատութեամբ՝ կազմած է իւր այդ յօդուածները և անոնց աւելի մատենագրական ձեւ մը տուած։ Երգերութեանց մէջ այս և ասոր նման բանասիրական յօդուածոց հրատարակութիւնն՝ մենք շատ օգտակար կը տեսնենք, վասն զի մեր ժողովրդեան մեծ մասը որ Հայ մատենագրական կամ բանասիրական գրութիւններէ կը խորշի և աւելի քաղաքական և վիպասանական ընթերցման կը պարտապի, այս կերպով տակաւ առ տակաւ խորշումը՝ ձգման պիտի բարեշրջի, երբ իրեն հասկնալի լեզուով և ոճով նախնաց գրականութիւնը ու պատմութիւնը կարգայ իրմէ անբաժան Բիւրակն դիտէ և կամ ուրիշ օրաթերթերու մէջ։

Բիւրակնի սկսած է հոգեւորական ընտիր յօդուածներ հրատարակել. կը գրէ իւր թերթին (թիւ 1046) մէջ.

«Մեր ընթերցողաց մէկ մասը, մանաւանդ գաւառացիներն, առաջին օրէն ի վեր կ'ենդրեն

մեզմէ որ կրօնական բաժին մ'աչ բանաք Բիւրակնի մէջ։ Մենք մենք ցարդ գոհացում չկրցենք տալ այս փափաքին, որովհետեւ լաւ կրօնական բաժին մը՝ ինչպէս կը հասկնանք՝ շատ աւելի զփաւար է գրել քան լաւ քաղաքական, լաւ բանասիրական, լաւ... և այլն»։

Բայց Բիւրակնի անցեալ տարի մեծ պահոց օրերու մէջ, մերթ ընդ մերթ Նարեկի հոգեւոր գրութիւնները ժողովրդեան լեզուով կը թարգմանէր իւր հոգեկան սնունդ իւր ընթերցողաց. և այս տարի սկսած է ինքնազիր քաղաքականներ հրատարակել, և կրնանք ըսել որ այդ յօդուածները շատ խնամքով գրուած են և զարդարուած գիտուն և ընտիր օրինակներով ու փաստերով՝ որով ժողովրդեան համար յանկուցիչ են անոնք։ Եթէ Բիւրակնի մէջ չպակսին, կրօնական այսպիսի յօդուածներ Պ. Քէչեանի նոյն պատուական օրաթերթին աչ աւելի փառաց և պատուոյ պիտի արժանանայ և Հայ լրագրութեան մէջ անզուգական օգուտ մը պիտի ունենայ։

ՄԱՂԻՒԿ. — Երաղիկ դեռ նոր իւր գեղեցիկ թերթերը բացած էր և մեծ եռանդ մը ցոյց կու տար՝ օրէ օր նոր գեղ ու գոյն, օգուտ ու բոյր ունենալով, բայց վերահաս ձմեռն զայն բնական ծաղկանց օրինաց եթերից. անոր թերթերն պահ մի ամփոփեցան և զոցուցան խաւարին ու խոնափին մէջ. սակայն այդ տխուր վիճակը ուրախ ենք ըսելու որ առանց երկար տեւելու զարնան ծաղկանց հետ՝ վերստին կը բողբոջի Հայ գրականութեան բուրաստանին մէջ. և կը պատրաստէ գեղեցիկ ծաղկեպսակներ Անդր-Պոլս մարտիկներու գլխին։ Երաղիկ վերականգնուած թեան առթիւ՝ անոր պատ. Խմբագրութեան Բազմավեպ իւր ջերմ խնդակցութիւնը կը յայտնէ։

Հ. Ս. ՅԵՆՍ.

Տ Ա Ր Ա Ջ

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար. — Տարեկան գինն է 6 ռուբլի։

Հասցէ՝ Rédaction der Agbur et Taraz
TIFLIS (Caucase)